ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան «28» մարտի 2025 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 04-Ա[1]

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի № 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը և Արփինե Սարգսի Առաքելյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 18-4-28.1-Մ4-2) Արփինե Սարգսի Առաքելյանին 2025 թվականի մարտի 31-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և 2025 թվականի ապրիլի 1-ից նշանակել նույն բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 18-4-28.1-Մ2-9):

2. Արփինե Սարգսի Առաքելյանի ամսական աշխատավարձը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ